**«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2Ե ծածկագրով**

**շրջանակային համաձայնագրերի միջոցով**

**գնում կատարելու ընթացակարգի հնարավոր**

**մասնակիցների ղեկավարներին**

*Հարգելի մասնակից*

,ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2Ե ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ Արարատի մարզի <<Արտաշատի Հ.Ճգնավորյան անվան հ.5 հիմնական դպրոց >> ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել ,Գնումների աջակցման կենտրոնե ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքներ:

Սույն հրավերի ծածկագիրն է հանդիսանում << ԱՀԴ-ՇՀ-ԱՊՁԲ-15/1-5>>:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել Արարատի մարզ, ք. Արտաշատ, Աճառյան փողոց, շենք 1 հասցեով, (Արտաշատ հ.5 դպրոց) մինչև 2015 թվականի փետրվարի 26-ը, ժամը՝ 10:00: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն Արարատի մարզ, ք. Արտաշատ, Աճառյան փողոց, շենք 1 հասցեով, (Արտաշատ հ.5 դպրոց) 2015 թվականի փետրվարի 26-ին, ժամը՝ 10:00:

Գնման առարկա է հանդիսանում <<Արտաշատի Հ.Ճգնավորյան անվան հ.5 հիմնական դպրոց >> ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերումը:

<<Արտաշատի Հ.Ճգնավորյան անվան հ.5 հիմնական դպրոց >> ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի (որոնք կազմված են 8 չափաբաժիններից) տեխնիկական բնութագրերը, գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացվում է սույն հրավերին կից (Հավելված 3):

Մասնակիցները ներկայացնում են իրենց կողմից հաստատված, համապատասխանաբար մեկ բնօրինակ և երկու պատճեներից կազմված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված 1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված 2): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Գնային առաջարկը պետք է ներկայացվի տվյալ չափաբաժնի ընդամենը գումարով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

<<Արտաշատի Հ.Ճգնավորյան անվան հ.5 հիմնական դպրոց >> ՊՈԱԿ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ artashat5@schools.am:

**Հարգանքով՝**

**Տնօրեն** **Ռ.Հ այրապետյան**